ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ,ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,ՏՆՏԵՍԱԿԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 43

13 հոկտեմբերի 2025 թվական

Տեղի ունեցավ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի N 11 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Աննա Գևորգյանը, անդամներ՝ Իրինա Սիրունյանը և Հրայր Ասատրյանը :

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի ֆինասատնտեսագիտական և գնումների բաժնի պետի կողմից ներկայացված «**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խոյ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 145-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**» նախագիծը՝ Խոյ համայնքի 2025 թվականի հոկտեմբերի 15-ի ավագանու հերթական նիստում :

Նիստում քննարկվեց «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 145-Ա որոշմամբ հաստատված N8 հավելվածում փոփոխություն կատարելու մասին հարցը: Նիստին ներկա գտնվողների բոլոր հարցերը ստացան պատասխաններ և հիմնավորումներ

Հանձնաժողովի ներկա անդամները ավագանու որոշան նախագծի վերաբերյալ տվեցին դրական եզրակացություն.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջետային հիմնարկների /մանկապարտեզների/ աշխատակիցների 2025 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1, հավելվածի:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ